ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 մարտի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

32
(2698)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՉԻՆՉ ՉՏՎԱԾ ՄԵԿ ՏԱՐԻ



2022 թվականի մարտի 3-ին 71 կողմ ձայներով Վահագն Խաչատուրյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում: Փաստորեն, երեկ լրացավ Վահագն Խաչատուրյանի՝նախագահի պաշտոնում պաշտոնավարման 1 տարին, սակայն այս մեկ տարվա ընթացքում դժվար է անգամ մատների վրա հաշվել, թե ինչ հանրօգուտ աշխատանք է կատարել Վահագն Խաչատուրյանը: Նրա պաշտոնավարման մեկնարկից հետո Հայաստանը կրկին դժվարություններ է ունեցել՝ սեպտեմբերյան ագրեսիա, Լաչինի միջանցքի փակում եւ այլն, սակայն այդ իրադարձությունների ժամանակ, որպես երկրի նախագահ, նրա աշխատանքի արդյունքը չի զգացվել: Միակ բանը, որով թերեւս կարող ենք հիշել Վահագն Խաչատուրյանի պաշտոնավարման մեկ տարին, սկանդալն էր, որում նա հայտնվեց նախորդ տարվա սեպտեմբերին: Խոսքը դրվագի մասին է, երբ Խաչատուրյանը Մեծ Բրիտանիայի թագուհի Եղիսաբեթ Երկրորդի դագաղի մոտ լուսանկարվել էր, մի վայրում, որտեղ լուսանկարվելն արգելված է: Հոդվածներում նշվում էր, որ նա ոչ միայն լուսանկարվել է, այլեւ բարձր շատախոսել է՝ առաջացնելով ներկաների զարմանքը: Իհարկե, մյուս կարեւոր գործունեությունն էլ վարչապետ Նիկոլ Փաշինյանին քծնելու մեջ է: Միայն այս տարվա փետրվարի 10-ին, երբ նրանք հանդիպել են, նախագահի լրատվության վարչության ուղարկած հայտարարության մեջ ութ անգամ Խաչատուրյանը շնորհակալություն էր հայտնում Փաշինյանին: Ահա թե ինչպես ենք ամփոփում Վահագն Խաչատուրյանի պաշտոնավարման մեկ տարին:

«Հայաստան» խմբակցությունը երեկ շրջանառության մեջ է դրել Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին նախագիծը: Որպես Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հիմք՝նշվում է, որ վերջինս, խախտելով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները, ձեռնարկատիրությամբ է զբաղվել: Որպեսզի ընդդիմության հեղինակած նախագիծը մտնի ԱԺ լիագումար նիստերի օրակարգ, այն նախ պետք է երկշաբաթյա ժամկետում արժանանա ԱԺ պետահիրավական հանձնաժողովի հավանությանը, իսկ որպեսզի ԱԺ-ն Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու համար պաշտոնապես դիմի ՍԴ, պետք է նախագիծն ընդունվի պատգամավորների ձայների 3/5-ով, այսինքն՝ անհրաժեշտ է լինելու 65 ձայն: Հաշվի առնելով, որ ընդդիմադիր երկու խմբակցությունները միասին ունեն 35 ձայն, ՔՊ-ականները եւս պետք է կողմ քվեարկեն: «Ժողովուրդ» օրաթերթին ԱԺ պետահիրավական հանձնաժողովի ՔՊ-ական անդամներն ասացին, որ դեռ չեն քննարկել այս հարցը, վերջնական որոշում չունեն, բայց առավել հակված են հավանություն չտալ Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման նախագծին: Ի վերջո, Սեդա Սաֆարյանին հենց ՔՊ-ն է գործուղել ՍԴ, վերջինս իշխանության «սրտի դատավորն» է, ուստի առավել հավանական է, որ ՔՊ-ականները չեն միանա ընդդիմության նախագծին: ՔՊ-ականները տարբեր առիթներով հայտարարում են, թե Սեդա Սաֆարյանի արարքի մեջ որեւէ հանցակազմ չկա: Ստացվում է՝ իշխանությունը եւս հովանավորում է ՍԴ դատավորի ապօրինությունները:

Գյումրու փոխքաղաքապետի պաշտոններից մեկը 5-6 ամիս է՝թափուր է: Նախկինում այդ պաշտոնը զբաղեցնում էր Դավիթ Առուշանյանը, որը նախորդ տարի հոկտեմբերին հրաժարական տվեց եւ գործուղվեց խորհրդարան. այժմ ՔՊ խմբակցության պատգամավոր է: Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ ՔՊ-ն փոխքաղաքապետի պաշտոնում առաջադրել է Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության անդամ Վահագն Մկրտչյանի թեկնածությունը, եւ առաջիկա ավագանու նիստում, քաղաքապետի ներկայացմամբ, ավագանու ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերջինս կընտրվի փոխքաղաքապետ: «Ժողովուրդ» օրաթերթի՝Գյումրու աղբյուրները հայտնեցին, որ Վահագն Մկրտչյանը վարչապետի տիկնոջ՝Աննա Հակոբյանի մորաքրոջ թոռն է: Գյումրիից մեր զրուցակիցը նշեց, որ վերջինս գյումրեցիներին ոչնչով հայտնի չէ, մինչ այս քաղաքական գործունեություն չի ծավալել, մասնագիտությամբ ատամաբույժ է,ավելին՝Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության ամենապասիվ անդամներից է: «ՔՊ-ում կադրային սով է, թեկնածու չունեն, փոխքաղաքապետի պաշտոնն էլ թափուր է: Որպեսզի ինչ-որ մեկին լավություն անեն, որոշել են իրենց ազգականին լավություն անեն»,-ասաց մեր զրուցակիցը: Ի դեպ, Գյումրու մյուս փոխքաղաքապետը Արթուր Պապիկյանն է, ով ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանի հորեղբոր թոռն է, նաեւ՝նախկին զինվորական:



ՀՀ կառավարությունը շարունակում է պրակտիկան, երբ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների առաջարկները չեն ընդունվում եւ մնում են թղթի վրա: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց ՀՀ կառավարության կողմից ներկայացված ««Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Օրենսդրական այս փոփոխության արդյունքում Դատախազությունը լիազորված կլինի համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան, այդ թվում՝ վիճարկել համայնքների ղեկավարների այն հրամաններն ու որոշումները, որոնց արդյունքում օտարվել են համայնքային սեփականություն հանդիսացող զբոսայգիները, պուրակները, մանկապարտեզներն ու այլ անշարժ գույքերը: Ասել է թե՝ տեղական ինքնակառավարում ասվածը հոդս է ցնդելու: Եվ, ահա, այս նախագծի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթերցում ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը ներկայացրած է եղել 10-ից ավել առաջարկ, որոնք բոլորն էլ չեն ընդունվել, այնինչ կառավարության բոլոր առաջարկներն ընդունվել են, եւ համապատասխան փոփոխություններ են կատարվել: Յուրաքանչյուր անգամ առաջարկը չընդունելու տարբեր պատճառաբանություններ են բերվել, սակայն փաստն այն է, որ ընդդիմադիրների հետ չհամագործակցելու պրակտիկան ԱԺ-ում շարունակվում է:

ՈՏՔԻ Է ԿԱՆԳՆԵԼ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԲԱՑԵԼ ՄԻՋԱՆՑՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթն Արցախում ստեղծված իրավիճակի եւ Լաչինի միջանցքի բացման շուրջ տարվող բանակցությունների վերաբերյալ զրուցել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանի հետ:

-Պարոն Ասլանյան, տեւական ժամանակ է՝ մամուլը գրում է, որ Լաչինի միջանցքն առաջիկայում բացվելու է, փոխարենը՝ անցակետեր են տեղադրվելու ճանապարհի այդ հատվածում: Դուք ի՞նչ տեղեկություններ ունեք, համապատասխանո՞ւմ են այս տեղեկությունները իրականությանը:

-Լաչինի միջանցքը պետք է բացվի, որովհետեւ Ադրբեջանն ուղղակիորեն չի կարող չբացել. եթե Ադրբեջանը շարունակի մնալ 20-րդ դարի մտածողության մեջ, ապա ամբողջ աշխարհի հետ պրոբլեմներ կունենա: Այսօրվա իրավիճակը 100 տարի առաջվա իրավիճակը չէ, որ մարդիկ ինչ ցանկանան, անեն, ու դա ծածկված մնա. ժամանակի ընթացքում ամեն ինչ պարզվում է: Ակնհայտ է, որ միջանցքի բացման համար Ադրբեջանը պրեսինգի տակ է, այս բանակցությունները գալիս են ապացուցելու, որ, ուզի-չուզի, Ադրբեջանը պետք է բացի ճանապարհը: Ինչ վերաբերում է անցակետի տեղադրմանը, դա դեռ հարց է, քանի որ Հաագայի դատարանի որոշման մեջ չկա, որ Ադրբեջանը պետք է բացի միջանցքը, դրա փոխարեն իրավունք ունի անցակետ տեղադրել: Այնտեղ պարզ ասվում է միայն, որ պարտավոր է բացել ճանապարհը, իսկ թե ոնց կփորձի մանիպուլացնել այս ամենը, դա դեռ ապագայի հարց է:

-Պարոն Ասլանյան, ձեր քաղաքական թիմի հասցեին հնչող հիմնական մեղադրանքը հանրության եւ ընդդիմադիրների կողմից, այն է, որ ձեռքերը լվացել են Արցախից, բավարար ջանքեր չեք գործադրում միջանցքի բացման համար. ինչպե՞ս կարձագանքեք այս մեղադրանքներին, Դուք բավարար գնահատո՞ւմ եք այս ուղղությամբ տարվող աշխատանքը:

-Մի կողմից՝ ասում են, որ Լաչինի միջանցքը բացվելու է, մյուս կողմից՝ ասում են՝ իշխանությունը ոչինչ չի ձեռնարկում; Բա եթե ոչինչ չի ձեռնարկվում, ինչպե՞ս է ստացվում, որ բացվում է ճանապարհը: Միջազգային հանրությունը կամ Հաագայի դատարանը հենց այնպես ելավ քնից ու որոշեց նման վճիռ կայացնե՞լ: Ինչո՞ւ մարդիկ չեն ուզում տեսնել, թե ինչ մեծ աշխատանք է տարվել, որպեսզի Հայաստանի բողոքը՝ ընդդեմ Ադրբեջանի, քննվի այդ բարձր ինստիտուտում: Ի վերջո, հայանպաստ որոշում է կայացվել. ինչպե՞ս ստացվեց, որ իշխանությունները ոչինչ չեն անում: Հստակ, քայլ առ քայլ մաքրվում է կեղծիքի դաշտը, եւ ամեն մարդու երեսը երեւում է, այդ թվում՝ նաեւ Ադրբեջանի:

-Ձեր թիմակիցները պարբերաբար հայտարարում են, որ Հայաստանը չպետք է խառնվի բանակցություններում, Ստեփանակերտը եւ Բաքուն առանձին պետք է բանակցեն. կիսո՞ւմ եք նրանց այս տեսակետը:

-Մենք հիմա գալիս ենք նրան, որ միջազգային հանրությունը մեր պահանջների մեջ չի տեսնում Ադրբեջանի տարածք գրավելու գաղափար: Հայաստանը հարց է բարձրացնում՝ Արցախում ապրում է շուրջ 120.000 հայություն, որն իրավունք ունի միջազգային օրենքներով ազատ եւ ապահով կյանք ունենալ: Այդ ժողովուրդը հիմա ոտքի է կանգնել եւ ուզում է պաշտպանվել, անկախ ու անվտանգ ապրել: Մյուս մանիպուլյացիաները թող մի կողմ դնեն: Արցախը եւ Արցախի ժողովուրդը պետք է պայքարեն, իսկ մենք բոլոր հարցերում Արցախի ժողովրդի կողքին ենք՝ անկախ այն ամենից, ինչ կխոսեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԴԺԳՈՀ Է

ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԿՏԱՆ

Այս օրերին իշխանության վերնախավում բուռն կերպով քննարկվում է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հարցը: Ավելին՝ իշխանական վերնախավում արդեն հստակ որոշված է, որ նախարար Սուրեն Պապիկյանը հեռանալու է պաշտոնից:

Մեր աղբյուրները հայտնում են, որ Սուրեն Պապիկյանի հեռանալ-չհեռանալու հարցը բուռն կերպով քննարկվում է նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում: Այս հարցում խմբակցության եւ կուսակցության ներսում կարծիքները տարբեր են, եւ ՔՊ-ականներից ոչ բոլորն են կողմնակից, որ Սուրեն Պապիկյանը լքի իր պաշտոնը, սակայն բոլորն էլ հասկանում են, որ դա անձամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պետք է որոշի:

Փաշինյանը ոչ մի կերպ չի կարողանում Սուրեն Պապիկյանին ներել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության կեղծված ընտրություններ կազմակերպելու համար: Ավելին՝ հենց Պապիկյանին է նա համարում այդ ընտրությունների գլխավոր մեղավորը: Ինչպես հայտնի է, ՔՊ ղեկավար մարմնի ընտրությունների արդյունքերը սխալ էին հաշվարկվել, եւ ստացված դիմումի հիման վրա՝ իրականացվել էր քվեաթերթիկների վերահաշվարկ: Արդյունքում վարչության կազմից դուրս էին մնացել իշխող խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը, փոխարենը նոր վարչության կազմում ընդգրկվել էին պատգամավոր Արսեն Թորոսյանը եւ ԱԻՆ նախարար Արմեն Փամբուխչյանը:

Եվ, ահա, այս ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը որեւէ կերպ չի ցանկացել շփվել Սուրեն Պապիկյանի հետ: Այս ընթացքում կուսակցությունը նախարարի փնտրտուքների մեջ է: Թե այս ամենը ինչ ելք կունենա, դեռեւս ոչ ոք չի կարող ասել. փաստ է, որ ամիսներ է՝ Փաշինյան-Պապիկյան երբեմնի ամենամտերիմ, ամենաջերմ փոխհարաբերություններն արդեն չկան:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՈՒՆԵՆԱ ՏԵՂԱԿԱԼ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահն այսուհետ կունենա նաեւ տեղակալ: Մասնավորապես, հանձնաժողովն առաջարկում է փոփոխություն կատարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի օրենքում եւ ամրագրել այդ դրույթը:

ArmLur.am-ը նախագծի հիմնավորումից տեղեկանում է, թե այս օրենքում խնդրահարույց կետեր կան: Օրինակ՝ օրենքում չկա հնարավորություն Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահին փոխարինելու մասին: Ամրագրված է, որ հանձնաժողովի նախագահն իր իրավասության սահմաններում ներկայացնում է հանձնաժողովը Ազգային ժողովի, Կառավարության, կոմիտեի նիստերին կամ այլ աշխատանքի քննարկումներին: Նման պայմաններում վերջինիս արձակուրդի կամ գործուղման դեպքում անհնար է դառնում տվյալ նիստերին կամ քննարկումներին մասնակցությունը հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինող այլ անդամի կողմից:

Օրենքի գործող կարգավորումներով՝ հանձնաժողովի նախագահի կողմից իր իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային ոչ պարտադիր բնույթի փաստաթուղթ, այդ թվում՝ հուշագիր ստորագրելու իրավասությունն իրականացվում է որպես օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների շրջանակում: Անհրաժեշտություն է առաջացել ուղղակիորեն նախատեսել հանձնաժողովի նախագահի կողմից իր իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային ոչ պարտադիր բնույթի փաստաթուղթ, այդ թվում՝ հուշագիր ստորագրելու առանձին հիմքը:

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ՀՀ լավագույն դատավորներից Ա. Վարդանյանի նախագահությամբ, բավարարեց ներկայացված հատուկ վերանայման բողոքը եւ արձանագրեց, որ ՀՀ վարչապետին ուղեկցող շարասյան ավտոմեքենայի վարորդի կողմից Սոնա Մնացականյանին վրաերթի ենթարկելու դեպքով մինչդատական վարույթի ընթացքում խախտվել են տուժողի իրավահաջորդ Մնացական Մնացականյանի իրավունքները եւ իրավաչափ շահերը՝ շարասյան ղեկավար եւ պատասխանատու կազմի պաշտոնատար անձանց արարքների քրեաիրավական գնահատման կապակցությամբ պատշաճ քննություն չկատարելու իմաստով:

«Բազմիցս նշել եմ, որ այս դեպքով իրականացվել է ուղղորդված նախաքննություն, բացահայտ նպատակներով «անհետացվել» է շարասյան ավտոմեքենաներում օգտագործված ռադիոկապի ձայնագրությունը: Նաեւ չեմ բացառում, որ իշխանությունը փորձելու է ՀՀ վճռաբեկ դատարանի միջոցով բեկանել այս դատական ակտը եւ, ի վերջո, փակել իր համար խոցելի թեման (քանի որ մեր հասարակության հիշողության աստիճանը լավ են «չափել»), իսկ անկախ դատավորին, տաղանդավոր իրավաբանին դարձնել ԲԴԽ կոչված՝ իրավունքի, իրավաբանության կառափնարանի հերթական թիրախ»,- հայտնեց փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը:

ՔԱՇՔՇՈՒԿ՝ ԱՂԱՋԱՐՅԱՆԻ ԵՒ ՎԱՃԱՌՈՂԻ ՄԻՋԵՒ

Արաբկիր վարչական շրջանի Տիգրանյան փողոցում երեկ միջադեպ է տեղի ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի մասնակցությամբ: Պատգամավորը եւ այդ փողոցում կարտոֆիլ վաճառողը քաշքշել են միմյանց, ինչից հետո նրանց կանչել են ոստիկանություն՝ բացատրություն տալու: Աղազարյանն ասաց, որ ինքը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Ոստիկանություն: «Ես Տիգրանյան փողոցով երթեւեկելիս նկատեցի, որ փողոցի մի հատվածում մեքենա կա կանգնած, առեւտուր էին անում, կարտոֆիլ էին այդտեղ վաճառում, կանգնեցի ու փորձեցի ճշտել՝ թե ումն է, ով է վաճառում, մոտեցավ մի տղամարդ, կոպիտ սկսեց խոսել, ասաց՝ իմ կարտոֆիլն է, ես եմ վաճառում, իմ երեխաների հացն է: Ես էլ ասացի՝ քո երեխաների հացն է, բայց փողոց ես փակում, երթեւեկություն ես խանգարում, վթարային իրավիճակ ես ստեղծում, կարող է վտանգավոր միջադեպ լինի, ուրիշի երեխան ընկնի մեքենայի տակ. ինչու՞ կարտոֆիլը չես վաճառում այնտեղ, որտեղ թույլատրվում է: Քաշքշոց եղավ, հետո ոստիկաններն եկան ու տարան, ես էլ ոստիկանությունում բացատրություն տվեցի»,-պատմեց պատգամավորը:

ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ ԵՆ

Պաշտոնական Ստեփանակերտը հայտարարում է, թե Բաքվի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպմանը Արցախի կարգավիճակին վերաբերող հարցեր չեն քննարկվել: Արցախի արտգործնախարարությունից նաեւ հայտնում են, որ նման ձեւաչափով շփումները չեն կարող փոխարինել լիարժեք խաղաղ բանակցություններին: Կառույցը շարունակում է՝ հակամարտության կարգավորման համար անհրաժեշտ է վերականգնել միջազգային միջնորդական ձեւաչափը: Նկատենք՝ Բաքուն այլ կերպ է ներկայացնում հանդիպումը: Նրանք հայտարարել են, թե քննարկել են Ադրբեջանի Ղարաբաղի շրջանում ապրող հայերին Ադրբեջանում ինտեգրելու հարցը՝ երկրի Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան: Եվ առաջին անգամ նաեւ հայտարարվեց, թե Բաքուն Ղարաբաղում ապրող հայերի հետ շփումների պատասխանատու է նշանակել Միլի մեջլիսի պատգամավոր Ռամին Մամեդովը, որը բանակցություններից հետո վստահեցրել է՝ երկխոսությունը կայացած է: Արցախից Ադրբեջանի հետ բանակցող են նշանակվել Արցախի ԱԽ քարտուղար Սամվել Շահրամանյանն ու ռուսական խաղաղապահ զորախմբի հետ համագործակցության ապահովման կենտրոնի տնօրեն Սերգեյ Մարտիրոսյանը: Ադրբեջանը Միլի մեջլիսի պատգամավոր Ռամին Մամեդովը, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ծնվել է Մարտակերտում, սովորել է Շուշիի դպրոցում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՔ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԵՆ

«Ադրբեջանը մինչ այժմ չի կատարել Արդարադատության միջազգային դատարանի որոշումը, եւ Լաչինի միջանցքով երթեւեկությունը շարունակում է մնալ խաթարված». Բեռլինում՝ Արտաքին քաղաքականության գերմանական խորհրդում, «Անվտանգությունը եւ կայունությունը՝ Հարավային Կովկասում. Հայաստանի հեռանկարը» թեմայով քննարկման ժամանակ հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետն ընդգծել է, որ թեեւ բնական գազի մատակարարումը վերականգնվել է, սակայն էլեկտրաէներգիայի մատակարարումը Լեռնային Ղարաբաղ, որը դադարեցվել էր 2023 թվականի հունվարի 9-ին, դեռեւս չի վերականգնվել, սննդի մատակարարումները դեռեւս իրականացվում են կտրոններով, իսկ մարդիկ զրկված են հրատապ բժշկական օգնության հնարավորությունից:

Վարչապետի խոսքով՝ միայն Կարմիր խաչը եւ ռուս խաղաղապահները հնարավորություն ունեն սահմանափակ քանակությամբ սնունդ եւ կենսական նշանակության ապրանքներ հասցնել Լեռնային Ղարաբաղ, իսկ բժշկական շտապ միջամտության կարիք ունեցող մարդկանց՝ տեղափոխել Հայաստանի հիվանդանոցներ:

Հաագայի դատարանը փետրվարի 22-ին մասամբ բավարարեց Ադրբեջանի դեմ միջանկյալ միջոց կիրառելու Հայաստանի դիմումը՝ պարտավորեցնելով Ադրբեջանին մինչեւ «Հայաստանը՝ ընդդեմ Ադրբեջանի» գործով վերջնական որոշման կայացումը ձեռնարկել բոլոր միջոցները՝ երաշխավորելու Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը:

«Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի աճող ագրեսիվությունը հստակեցնում է Ադրբեջանի մտադրությունները՝ իրականացնելու հայերի էթնիկ զտումներ». հայտարարեց Փաշինյանը՝ հիշեցնելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունը, թե Լաչինի միջանցքը բաց է այն հայերի համար, որոնք ցանկանում են լքել Ղարաբաղը:

Անդրադառնալով հայ-ադրբեջանական բանակցություններին՝ Փաշինյանն ընդգծել է՝ Հայաստանի կառավարությունը դրսեւորել է քաղաքական կամք եւ վճռական քայլեր է ձեռնարկում Հարավային Կովկասում խաղաղության եւ կայունության նոր դարաշրջան բացելու ուղղությամբ՝ շեշտելով՝ Երեւանը կառուցողականորեն ներգրավված է Հայաստան-Ադրբեջան բանակցություններում:

«Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացն ընթանում է հետեւյալ երեք հիմնական ուղղություններով՝ համաձայնագիր՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման մասին, տարածաշրջանում տրանսպորտային հաղորդակցությունների եւ տնտեսական կապերի ապաշրջափակում եւ սահմանագծում եւ անվտանգություն», - ասել է գործադիրի ղեկավարը՝ վերահաստատելով՝ Հայաստանը համաձայնել է տարանցատել ԼՂ հիմնախնդրի կարգավորումը հայ-ադրբեջանական գործընթացից՝ այն տրամաբանությամբ, որ Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ կձեւավորվի քննարկումների միջազգային մեխանիզմ:

Փաշինյանը վերահաստատել է Հայաստանի համար Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգության եւ իրավունքների խնդիրների լուծմանն ուղղված երաշխիքային մեխանիզմի ստեղծման կարեւորությունը, որը կունենա միջազգային տեսանելիություն եւ ներգրավվածություն:

«Խաղաղության օրակարգն իմ պարտականությունն է, եւ ես կցանկանայի ադրբեջանական հանրությունից եւս ստանալ որոշ աջակցություն», - հայտարարել է Հայաստանի վարչապետը՝ ելույթից հետո պատասխանելով ադրբեջանցի ներկայացուցչի հարցին:

«Մենք միջազգային հանրության, մեր տարածաշրջանի ազգերի աջակցության կարիքն ունենք եւ պատրաստ ենք կրել այդ պատասխանատվությունը, մինչեւ որ կհասնենք վերջնական եւ կայուն խաղաղության: Եվ վերջերս ես հայտարարեցի մեր խորհրդարանում եւ կառավարությունում, որ ունեմ լիարժեք վճռականություն Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր ստորագրելու հարցում, բայց դա չպետք է Հայաստանի համար կապիտուլյացիայի նմանվող փաստաթուղթ լինի: Դա պետք է մեր տարածաշրջանի համար իրական եւ հարատեւ խաղաղության փաստաթուղթ լինի, եւ ես պատրաստ եմ կրել այդ պատասխանատվությունը՝ հանուն խաղաղության, կայունության, տարածաշրջանային եւ միջազգային համագործակցության: Սա է այսօրվա մեր քննարկման իմ վերջնական եզրափակումը», - հայտարարել է Նիկոլ Փաշինյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՐՔՈՅԱՆԸ ԿՄԵԿՆԻ ՆՅՈՒ-ԴԵԼԻ

Մարտի 3-4-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով կգտնվի Նյու-Դելիում՝ մասնակցելու Հնդկաստանի՝ աշխարհաքաղաքականության եւ աշխարհատնտեսության թեմաներով առաջատար համաժողով «Ռայսինա երկխոսությանը»: ԱԳՆ-ից հայտնում են, որ նախարար Միրզոյանը համաժողովի շրջանակներում, որպես բանախոս, կմասնակցի պանելային քննարկման, ինչպես նաեւ հանդիպումներ կունենա գործընկերների հետ:

ՈՂՋՈՒՆԵԼ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը ողջունել է նախօրեին ՀՀ վարչապետի հետ ասուլիսի ընթացքում Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի արած հայտարարությունը: Կանցլերը նշել էր, որ Արցախի հարցը պետք է լուծվի Հայաստանի, Ադրբեջանի տարածքային ամբողջականության, ինչպես նաեւ «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի սկզբունքի հիման վրա»: Կանցլերը նշել էր, որ Գերմանիայի համար այդ երկու սկզբունքները հավասարազոր են:

«Մենք ողջունում ենք Օլաֆ Շոլցի հայտարարությունը, որում նշվում է, որ հակամարտությունը պետք է կարգավորվի խաղաղ ճանապարհով՝ տարածքային ամբողջականության եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հավասար սկզբունքների հիման վրա: Կարգավորումն անհնար է՝ առանց լիովին հաշվի առնելու մեր հիմնարար/կոլեկտիվ իրավունքները»,- գրել է Արցախի նախագահն իր թվիթերյան միկրոբլոգում:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանն ընդունել է ՀՀում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան, Ն.Գ. պարոն Կորնել Իոնեսկուին եւ լիազոր նախարար Իոնել Իվանին:

Ռումինիայի դեսպանը ներկայացրել է իրենց երկրի՝ կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացած Ազգային հակակոռուպցիոն մարմնի գործառույթներն ու լիազորությունների շրջանակը՝ նշելով, որ Ռումինիան մեծ առաջընթաց է արձանագրել հատկապես բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարվող կոռուպցիոն հանցագործությունների քննության բնագավառում: Դեսպան Իոնեսկուի խոսքով՝ Ռումինիայի ազգային հակակոռուպցիոն մարմինը թափանցիկ եւ հրապարակային աշխատանքի շնորհիվ այսօր վայելում է հանրության զգալի մասի վստահությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ կոռուպցիայի դեմ պայքարում ավելի արդյունավետ միջոցառումների իրականացման, ինչպես նաեւ երկու երկրների հակակոռուպցիոն մարմինների միջեւ համագործակցային կապերի ձեւավորման ու փորձի փոխանակման հնարավորությունները, այդ թվում՝ փոխադարձ այցերի միջոցով:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

2023 թվականի մարտի 3-ին հսկող դատախազը մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկել Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչի կողմից ենթադրյալ ապացույցներ կեղծելու վերաբերյալ քրեական վարույթը:

Դատախազությունից ArmLur.am-ին հայտնում են, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննված քրեական վարույթի շրջանակում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ քննիչ Ա.Ո.-ն, զբաղեցնելով Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչի պաշտոնը, իրականացրել է Քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (կողոպուտ) հարուցված քրեական վարույթի նախաքննությունը: Վարույթի նյութերով պարզվել է, որ քննիչ Ա.Ո.-ն, որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի (անձանց) հայտնի չլինելու հիմքով, 2022 թվականի մարտի 31-ին կայացրել է նշված քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում:

Այնուհետեւ դրա օրինականությունը ստուգելու նպատակով ուղարկել է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին: Հսկող դատախազի կողմից քննիչին տրվել է քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու, հանցանք կատարած անձանց ինքնությունները պարզելու նպատակով տուժողի դստերը՝ առերեւույթ հանցավոր արարքի կատարման ականատես վկային լրացուցիչ հարցաքննելու վերաբերյալ գրավոր ցուցում:

Ստանալով քրեական վարույթի նյութերը եւ դատախազի ցուցումը՝այն իբրեւ կատարելու, հանցագործությունը բացահայտելու պատրանք ստեղծելու նպատակով քննիչ Ա.Ո.-ն վկայի տվյալներով կազմել է լրացուցիչ հարցաքննության տպագիր արձանագրություն, շարադրել նախորդ հարցաքննությանը հակասող բովանդակությամբ ցուցմունք՝ ներառելով կեղծ տեղեկություններ:

Այնուհետեւ քննությամբ դեռեւս չպարզված անձը հարցաքննության արձանագրությունում վկայի փոխարեն ստորագրել եւ կատարել է «Ցուցմունքը տպագրվեց քննիչի կողմից, ճիշտ է, որի համար ստորագրում եմ» ձեռագիր գրառումը, իսկ քննիչ Ա.Ո.-ն իր ստորագրությամբ հաստատել է ապացուցողական գործողության արձանագրությունը:

2023 թվականի հունվարի 5-ին դատախազը Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշում է կայացրել՝ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 2-րդ մասով (քննիչի կողմից ապացույցներ կեղծելը): Որպես խափանման միջոց ընտրված է պաշտոնավարման կասեցումը եւ բացակայելու արգելքը:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՔԿՀ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում բացահայտվել են ՀՀ քրեակատարողական ծառայության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ բաժնի պետի տեղակալ Ա. Ա.-ի կողմից նույն ՔԿՀ-ի կալանավորից եւ դատապարտյալից կաշառք ստանալու դեպքեր:

Նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ա. Ա.-ն ՔԿՀ հիմնարկի դատապարտյալ Ա. Ս.-ի օգտին հովանավորչության եւ թողտվության, այն է՝ վերջինիս նկատմամբ բարեհաճ վերաբերմունք դրսեւորելու եւ խնդիրներ չստեղծելու, ինչպես նաեւ արգելված առարկա հանդիսացող բջջային հեռախոսը չառգրավելու համար դատապարտյալից պահանջել է 200.000 ՀՀ դրամ կաշառք: Դրանից հետո՝2022 թվականի մայիսի 30-ին, կաշառքի հիշյալ գումարը դատապարտյալ Ա. Ս.-ի կնոջ բանկային հաշվից փոխանցվել է ՔԿՀ պաշտոնյայի՝Ա. Ա.-ի կնոջ անվամբ գրանցված, սակայն փաստացի Ա. Ա.-ի կողմից տնօրինվող բանկային հաշվին:

Բացի այդ, վերը նշված պաշտոնատար անձը նույն քրեակատարողական հիմնարկի կալանավոր, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, «օրենքով գող» Ա. Դ.-ի օգտին նույնպես բարեհաճ վերաբերմունք դրսեւորելու, խնդիրներ չստեղծելու, ինչպես նաեւ բջջային հեռախոսը չառգրավելու համար հիշյալ կալանավորից պահանջել եւ վերջինիս հետ փոխկապակցված անձանց կողմից վճարային տերմինալներից տարբեր օրերին կատարված փոխանցումների միջոցով ստացել է ընդհանուր 448.600 ՀՀ դրամ կաշառք, որը կրկին փոխանցվել է իր կնոջ բանկային հաշվեհամարին:

2023թ. փետրվարի 28-ին հիշյալ քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել է չորս անձ:

2023թ. մարտի 2-ին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ դատապարտյալ Ա.Ս.-ին մեղադրանք է ներկայացվել՝ 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, իսկ հիշյալ ՔԿՀ-ի օպերատիվ բաժնի պետի տեղակալ Ա. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ):

Նույն օրը քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝Ա. Ա.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար, որը բավարարվել է: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՏԵՂՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է

Արագածոտնի մարզում երեկ՝մարտի 3-ին, խոշոր ու ողբերգական ավտովթար է տեղի ունեցել. ժամը 08:40-ի սահմաններում Երեւան-Վանաձոր ավտոճանապարհի Ծիլքար գյուղի վարչական տարածքում բախվել են վրացական համարանիշներով Mercedes GL եւ Volkswagen մակնիշի ավտոմեքենաները:

Վթարի հետեւանքով 1 հոգի տեղում մահացել է: Վթարի փաստով նախաձեռնվել է վարույթ: Ոստիկանությունն ու քննչական վարչությունը պարզում են վարորդների եւ մահացածի ինքնությունը:

Քննիչի հանձնարարականով՝ ավտոմեքենաները տեղափոխվել են Ոստիկանության Արագածի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

ԱՎՏՈՎԹԱՐ

Մարտի 2-ին՝ ժամը 22:26-ին, Սյունիքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Կապան քաղաքի Հունան Ավետիսյան փողոցի վերջնամասում տեղի է ունեցել ավտովթար. կան տուժածներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Պարզվել է, որ բախվել են Mercedes-Benz (վարորդ՝ Ս. Խ.՝ ծնված 1983 թ.) եւ Toyota Camry (վարորդ՝Ռ. Հ.՝ ծնված 1981 թ.) մակնիշների ավտոմեքենաները:

Փրկարարները Toyota Camry մակնիշի ավտոմեքենայի վարորդին եւ ուղեւոր Վ. Օ.-ին մոտեցրել են շտապօգնության ավտոմեքենային: Տուժածները հոսպիտալացվել են Կապանի ԲԿ, որտեղ բժիշկները նրանց առողջական վիճակը գնահատել են բավարար:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները:

ՄԵՔԵՆԱՆ ԱՅՐՎԵԼ Է

ԱԻՊԾ ճգնաժամային կառավարման կենտրոնում մարտի 3-ին՝ժամը 09:07-ին, Ստեփանակերտ քաղաքի բնակչից ահազանգ է ստացվել, որ Դ. Բեկ փողոցում հրդեհ է բռնկվել:

Հրդեհաշիջման աշխատանքներ իրականացնելուեւ բնակչությանն օգնություն ցուցաբերելու նպատակով դեպքի վայր է մեկնել հրշեջ փրկարարական մեկ մարտական հաշվարկ:

ՆԳՆ արտակարգ իրավիճակների պետական ծառայության փոխանցմամբ՝ տեղ հասնելուց պարզվել է, որ հրդեհը մարվել է ձեռքի միջոցներով: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, զննել եւ համոզվելով, որ վտանգ չի սպառնում, վերադարձել են մշտական տեղակայման վայր:

Այրվել է «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի շարժիչի խցիկը: Դեպքի առթիվ ստուգումներ է իրականացնում ծառայության պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 61 դեպք, որոնցից 12-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՈՒՂԱՐԿԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրությունների ընթացքում համալսարանի վարչական շենքում կատարված ենթադրյալ խուլիգանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական գործը 2023 թվականի մարտի 1-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Հիշեցնենք, որ 2022 թվականի դեկտեմբերի 9-ին Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրությունների ընթացքում համալսարանի վարչական շենքում կատարված խուլիգանության վերաբերյալ հաղորդման առթիվ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում, Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանություն), նախաձեռնվել էր քրեական վարույթ: Վարույթով պարզվել էր, որ Գ.Թ.-ն, գբաղեցնելով Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի գլխավոր խորհրդականի պաշտոնը, համալսարանի վարչական շենքում հասարակության նկատմամբ անհարգալից եւ իրավական ու բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, բարձրաձայն հնչեցրել էր անպարկեշտ արտահայտություններ եւ հայհոյանքներ: 2022 թվականի դեկտեմբերի 27-ին հսկող դատախազը քրեական հետապնդում էր հարուցել Գ.Թ.-ի նկատմամբ. Գ.Թ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը:

ՓԱԿԵԼ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հրդեհից մահացած 19-ամյա զինծառայող Պալյան Պողոսյանի հարազատները փակել էին Գյումրի-Երեւան ավտոճանապարհը: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրեսը», հարազատները փակել էին ավտոճանապարհը՝ պահանջելով հանդիպում պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հետ:

Շիրակի մարզի Ազատան համայնքում բնակվող Պողոսյանների ընտանիքը ժամկետային զինծառայող որդու վերադարձին սպասում էր 2023-ի մարտին, սակայն, ինչպես տեղեկացրին ծնողները, դեպքից ամիսներ անց չկա տեղեկատվություն գործի քննության ընթացքի մասին:

Որոշ ժամանակ անց ոստիկաններին հաջողվեց բացել ճանապարհը՝ պայմանով, որ համապատասխան մարմինները կօգնեն հանդիպում կազմակերպել պաշտպանության նախարարի հետ: Ծնողները վստահեցնում են՝ եթե առաջիկա շաբաթվա ընթացքում դա չհաջողվի, իրենք նոր քայլեր կձեռնարկեն:

Սիսիանի դիրքերից մեկում՝ 3700 մետր բարձրության վրա՝ զինվորների հանգստի համար նախատեսված վագոն-տնակում տեղադրված վառարանից բռնկված հրդեհից Պալյան Պողոսյանն այրվածքներ էր ստացել: Նրան նախ տեղափոխել էին Զանգեզուրի կայազորային հոսպիտալ, այնուհետ՝ Երեւան՝ Այրվածքաբանության ազգային կենտրոն: Ինն օր անց տղան մահացավ ջերմային 2-րդ աստիճանի այրվածքներից:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է 4 ՀԱՐՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՏ

Ի կատարումն Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի 2023 թվականի փետրվարի 28-ի նիստում կայացված որոշման՝ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի նպատակն է ադրբեջանական կողմի հետ քննարկել ՀՐԱՏԱՊ հումանիտար հարցեր. այս մասին հայտարարություն է տարածել Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի գրասենյակը:

Հայտարարությունում նաեւ ասվում է. «Խմբի ղեկավարն է Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղար Սամվել Շահրամանյանը:

Արցախի Հանրապետությունում տեղակայված Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախմբի հրամանատարության միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2023 թվականի մարտի 1-ին՝ ժամը 11:00-ին, խաղաղապահ զորախմբի շտաբում, զորախմբի հրամանատար, գեներալ-մայոր Անդրեյ Վոլկովի մասնակցությամբ, անց է կացվել արցախյան եւ ադրբեջանական կողմերի հանդիպում, որին մասնակցել է Ադրբեջանի Հանրապետության կողմից ձեւավորված համանման աշխատանքային խումբը՝ Ադրբեջանի Հանրապետության Միլի Մեջլիսի պատգամավոր Ռամին Մամեդովի գլխավորությամբ:

Հանդիպման օրակարգային հարցերն էին՝

1. Արցախի Հանրապետություն բնական գազի մատակարարման անխափանության ապահովումը եւ հետագա գազանջատումների բացառումը,

2. Արցախի Հանրապետության էլեկտրամատակարարման վերականգնման նպատակով Հայաստանի Հանրապետությունից Արցախ մտնող միակ բարձրավոլտ գծի՝ Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության ներքո գտնվող հատվածի զննման եւ «Արցախէներգո» ՓԲԸ մասնագետների կողմից վերականգնողական աշխատանքների իրականացման հնարավորության ապահովումը,

3. Կաշենի եւ Դրմբոնի հանքավայրերի տարածքում ադրբեջանական մասնագիտական խմբի կողմից մեկանգամյա տեսողական շրջայցի կազմակերպումը,

4. Ստեփանակերտ-Գորիս մայրուղու ամբողջական բացումը:

Բացման խոսքում խաղաղապահ զորախմբի հրամանատարը ներկայացրել է հանդիպման մասնակիցներին՝ որպես Արցախի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության կողմեր: Այնուհետեւ արցախյան խմբի ղեկավարը ադրբեջանական կողմին պարզաբանել է իր գլխավորած խմբի լիազորությունները, այն է՝ վերը նշված կոնկրետ հարցերի քննարկումը եւ դրանց վերաբերյալ լուծումների որոնումը:

Հանդիպման սկզբնամասում ադրբեջանական խմբի ղեկավարը փորձել է զրույցը տանել Ադրբեջանին Արցախի ինտեգրման անհրաժեշտության ուղղությամբ՝ ներկայացնելով այդ դեպքում հնարավոր սոցիալ-տնտեսական առավելությունների ստացման հեռանկարներ, սակայն դրան արցախյան խմբի ղեկավարը հակազդել է՝ հորդորելով քննարկում իրականացնել հստակ առաջադրված հարցերով: Վերջինս ընդգծել է նաեւ, որ հումանիտար ու ենթակառուցվածքային հրատապ հարցերով այդ շփումները չեն կարող անդրադառնալ հակամարտության համապարփակ կարգավորման հիմնական հարցերին, եւ դրա համար անհրաժեշտ է ձեւավորել միջազգային լայն աջակցությամբ ձեւաչափ: Հարկ է նշել, որ ադրբեջանական խմբի մյուս անդամները զբաղվել են վերը նշված չորս կոնկրետ հարցերի քննարկմամբ եւ լուծումների որոնմամբ, ըստ այդմ՝ հանդիպման հետագա ընթացքը լիովին համապատասխանել է օրակարգով սահմանված շրջանակներին: Օրակարգային բոլոր հարցերի քննարկման արդյունքներով ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ, որոնք ադրբեջանական կողմը պարտավորվել է զեկուցել վերադաս մարմիններին եւ առաջիկա օրերի ընթացքում խաղաղապահ զորախմբի միջոցով արդյունքների մասին տեղեկացնել արցախյան կողմին: Հանդիպման ընթացքում ձեռք է բերվել նաեւ կողմերի միջեւ հետադարձ կապի կայուն մեխանիզմի ձեւավորման պայմանավորվածություն: Հանդիպմանը կողմերը պայմանավորվել էին առայժմ հանրայնացնել միայն ընդհանուր գծերով տեղեկատվություն՝ այն նկատառմամբ, որ գործընթացը դեռեւս գտնվում է աշխատանքային փուլում: Սակայն հանդիպումից կարճ ժամանակ անց ադրբեջանական խմբի ղեկավարը իր երկրի տեղեկատվական հարթակներում հանդես է եկել հարցազրույցներով, որոնցում բոլորովին այլ՝ բուն բովանդակությունից ու գործընթացից շեղված ապատեղեկատվություն է տարածել՝ մասնավորապես հայտարարելով, որ հանդիպմանը քննարկվել են «Ղարաբաղի տարածաշրջանի հայ բնակչության՝ Ադրբեջանին վերահնտեգրվելու հարցեր»: Ադրբեջանական պաշտոնյաների եւ մամուլի միջոցների այս զեղծարարությունը, ցավոք, օգտագործվել է նաեւ հայկական լրատվադաշտի որոշ ներկայացուցիչների կողմից՝ դրանով ստեղծելով թյուր տպավորություն, թե, իբր, արցախաադրբեջանական շփումներում քննարկվում են հակամարտության համապարփակ կարգավորմանն առնչվող հարցեր: Ինչպես նշեցինք, մարտի 1-ի հանդիպումը, որին, կրկնում ենք, մասնակցել է նաեւ ՌԴ խաղաղապահ զորախմբի հրամանատարը, նվիրված է եղել միայն Արցախի շրջափակման ու դրան առնչվող խնդիրների վերացման քայլերի քննարկմանը: Ադրբեջանական հաջորդ ապատեղեկատվությունը, որի համաձայն՝ կողմերի պաշտոնական ներկայացուցիչների հաջորդ հանդիպումը, իբր, «կարող է տեղի ունենալ Գյանջայում կամ Աղդամում», ընդ որում՝ առանց ՌԴ խաղաղապահ զորակազմի մասնակցության, եւս չի համապատասխանում իրականությանը: Հորդորում ենք չտրվել ադրբեջանական քարոզչամեքենայի հերյուրանքներին եւ համոզված լինել, որ վերը նշված գործընթացի եւ դրա արդյունքների մասին հանրությանը տրվելու է սպառիչ տեղեկատվություն:

ԺԱՄԿԵՏՆԵՐ

ԿՎԱՃԱՌՎԵՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Մարտի 6-ին կտեղաբաշխվեն 2024 թվականի մարտի 4-ին մարվող պետական պարտատոմսեր, ինչպես նաեւ կվաճառվեն խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր հետեւյալ պայմաններով՝ 6 ամիս՝ 8.5%, 12 ամիս՝ 9.0%, 24 ամիս՝ 9.2%, եւ 36 ամիս՝ 9.5% տարեկան եկամտաբերություններով:

Խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի հետգնման իրավունքը հնարավորություն է ընձեռում մինչեւ մարման ժամկետի լրանալը՝ հետգնման օրը հետ վերադարձնել պարտատոմսերը՝ ստանալով նաեւ մինչ հետգնումը հաշվարկված ամբողջ տոկոսագումարը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական պահառուի միջոցով պետական պարտատոմսեր կարող եք ձեռք բերել առցանց եղանակով՝ gp.շinfin.am կայքի միջոցով, կամ այցելել սպասարկման կետեր, որոնք գտնվում են հետեւյալ հասցեներում՝

Ամիրյան 23/1,
Տիգրան Մեծի 24,
Կոմիտաս 49:

Պետական պարտատոմսեր ձեռք բերելիս ֆիզիկական անձանց եկամուտը չի հարկվում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՄԻԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻՆ

«Ակբա» բանկը միացել է ՄԱԿ-ի կողմից իրականացվող «Կանանց հզորացման սկզբունքներ» ծրագրին (WEPs), որի նպատակն աշխատավայրերում, համայնքներում ու բիզնես ոլորտում կանանց հզորացումն է ու գենդերային հավասարության խթանումը:

«Մենք միացել ենք ՄԱԿ-ի կողմից իրականացվող «Կանանց հզորացման սկզբունքներ» ծրագրին, որպեսզի խթանենք վերջինիս սկզբունքների տարածումն ու զարգացումը: Այդ սկզբունքների նպատակը, առաջին հերթին, հավասարության սահմանումն է՝ սկսած աշխատանքային բարվոք պայմաններից մինչեւ առողջության, անվտանգության, բարեկեցության, կրթության ու մասնագիտական զարգացման հավասար հնարավորությունների ստեղծում: Պետք է ընդգծել, որ այս ծրագրին անդամակցելով՝ մենք ոչ թե նոր պարտավորություն ենք ստանձնում, այլ վերահաստատում ենք եւ ընդգծում մեր կողմից վաղուց որդեգրված քաղաքականությունը. կանայք չափազանց կարեւոր դեր են խաղում բոլոր բնագավառներում»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

Միջոցառման շրջանակում տեղի է ունեցել նաեւ պանելային քննարկում՝ «Կանանց հզորացման սկզբունքները. հավասարություն աշխատավայրում» թեմայով: «Ակբա» բանկը Հայաստանի խոշորագույն գործատուներից մեկն է, որտեղ աշխատում է իգական սեռի շուրջ 1100 ներկայացուցիչ, ինչը կազմում է բանկի ընդհանուր աշխատակիցների շուրջ 65%-ը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

Fitch–Ը ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՎԱՐԿԱՆԻՇԸ

Հեղինակավոր Fitch վարկանիշային գործակալությունը (Fitch Ratings) վերանայել է «Ակբա» բանկին շնորհած «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ վարկանիշի (long-term Issuer Default Rating IDR) հեռանկարը՝ «Կայունից» բարձրացնելով «Դրականի»:

Գործակալության հրապարակած զեկույցում նշված է, որ վերանայումը պայմանավորված է ՀՀ վարկանիշի հեռանկարի ու բանկի վարկային պորտֆելի որակի բարելավմամբ, ինչպես նաեւ ներգրավվող ռեսուրսների եւ իրացվելիության մակարդակի ամրապնդմամբ:

Fitch-ի կողմից հրապարակված հաշվետվությունում նաեւ նշվում է, որ, վերջինիս ակնկալիքով, տնտեսական դրական պայմանները կպահպանվեն եւ կնպաստեն բանկի ֆինանսական կայունության ամրապնդմանը, շահութաբերության աճին, իրացվելիության մակարդակի բարձրացմանը, իսկ բանկի ակտիվների որակը կշարունակի մնալ բարձր:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԳԵՐՄԱՆԻԱ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԲԱՑՎՈՒՄ

Գերմանիայի հետ Հայաստանի առեւտրաշրջանառությունը նախորդ տարի զգալի աճ է գրանցել. աճել է ինչպես ներմուծումը, այնպես էլ արտահանումը: Հայաստանը նախորդ տարի նաեւ վերականգնել է իր տեղը Գերմանիայի միջազգային համագործակցության երկրների ցանկում, ինչի արդյունքում ավելի լայն համագործակցության հնարավորություններ են բացվում: Այս մասին լրագրողների հետ ճեղազրույցում ասաց ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը, որը Գերմանիայում է ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում:

Փոխնախարարը նշեց, որ այցի օրակարգում կան տնտեսական հարցեր: «Վարչապետն իր խոսքում էլ որոշակի հղումներ կատարեց տնտեսական օրակարգին: Նշվեց «կանաչ ջրածնի» հնարավոր համագործակցության դաշտի մասին: Մեր կարծիքով՝ դա բավականին հեռանկարային է»,-ասաց փոխնախարարը:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ Հայաստանից Գերմանիա արտահանումը 2022 թվականին կազմել է 106 մլն 72.2 հազար դոլար, ինչը, 2021-ի համեմատ, աճել է 36.7 տոկոսով, իսկ ներմուծումը նախորդ տարի կազմել է 457 մլն 46.3 հազար դոլար, ինչը, 2021-ի համեմատ, ավելի է 2.1 անգամ:

Փոխնախարարը նկատեց՝ այդ բավականին մեծ աճը եվրոպական կողմում որոշակի շրջանակներում անհանգստություն է առաջացրել՝ այն մտավախությամբ, թե արդյոք դրանք ինչ-որ ձեւ առնչվում են Ռուսաստանի նկատմամբ արեւմտյան սանկցիաների շրջանցմանը:

«Կան մի շարք այլ պատճառաբանություններ, թե ինչու է առեւտրաշրջանառությունը նման աճ գրանցել: Երբ աշխարհում մատակարարման որոշ շղթաներ փոխվում են, տրամաբանական է, որ տնտեսավարողները փորձում են գտնել նոր շղթաներ: Եվ Հայաստանն այդ մատակարարման շղթաների մեջ ունի իր դիրքը: Դա փորձում ենք լավագույնս օգտագործել՝ ամենեւին չխաթարելով գոյություն ունեցող երկկողմանի պատժամիջոցների միջավայրը: Մենք աչալուրջ հետեւում ենք բոլոր գործարքներին եւ հետեւողական ենք, որ բոլոր տեսակի օրենսդրական պահանջները պահպանենք»,- վստահեցրեց փոխնախարարը:

Նա հիշեցրեց, որ Հայաստանը որոշ ժամանակ դուրս էր մնացել Գերմանիայի միջազգային համագործակցության երկրների ցանկից, սակայն անցյալ տարի հաջողվել է վերականգնվել:

«Եվ մենք այսուհետ նույնպես կլինենք Գերմանիայի երկկողմ համագործակցության երկրների ցանկում: Սա նշանակում է, որ բավականին հետաքրքիր հնարավորություններ են բացվում՝ ավելի լայն համագործակցության, ավելի խոշոր ֆինանսական ծրագրեր կարող են ներգրավվել Հայաստանում: Այս առումով աշխատանքները շարունակվում են»,-ասաց Ռաֆայել Գեւորգյանը:

Երկու երկրները տարբեր ոլորտներում ունեն բավականին հագեցած օրակարգ: Անդրադառնալով տնտեսականին՝ փոխնախարարն ասաց, որ փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացումից սկսած մինչեւ խոշոր արդյունաբերական ներդրումներ տեղ են գտել այդ օրակարգում: «Կարծում եմ՝ հենց այդ ուղղությամբ էլ համագործակցությունը պետք է շարունակել: Կարծում ենք, որ այն պայմանագրային ու իրավական դաշտը, որ այսօր գոյություն ունի Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ, թույլ են տալիս խոսել խոշոր ներդրումային ծրագրերի մասին, եւ այդ ուղղությամբ առաջիկայում ակտիվ աշխատանք ենք տանելու»,-նշեց Գեւորգյանը:

Նա հնարավոր համարեց Հայաստանի ու Գերմանիայի միջեւ առաջիկայում վերամշակման ոլորտում որոշակի համագործակցություն սկսելը:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ

ԳՐԱՆՑԵԼ Է ԿՐԿՆԱԿԻ ԱՃ

«Ամերիաբանկ»-ի փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) վարկային պորտֆելը 31.12.2022-ի դրությամբ կազմել է 163,6 մլրդ ՀՀ դրամ եւ վերջին հինգ տարվա կտրվածքով գրանցել է կրկնակի աճ: Զգալի աճ է արձանագրել նաեւ «Ամերիաբանկ»-ի ՓՄՁ հաճախորդների թիվը՝ 2018 թ.-ի համեմատ ավելանալով 6 անգամ, իսկ ՓՄՁ-ներին տրված վարկերի քանակն ավելացել է 5.5 անգամ:

2018 թվականից բանկը գործարկել է «Ամերիա բիզնես» էկոհամակարգը, որը գործում է մեկ պատուհանի սկզբունքով՝ առաջարկելով առանց բանկ այցելելու հաշիվ բացել «Ամերիաբանկ»-ում, ստանալ քարտ եւ Օնլայն/Մոբայլ բանկինգ, դիմել վարկավորման համար, ինչպես նաեւ օգտվել այլ ծառայություններից ու արտոնություններից:

2022 թ.-ի ընթացքում մինչեւ 10 մլն դրամ վարկավորման դեպքում «Ամերիաբանկ»-ի 10 հաճախորդից 7-ը վարկը ստացել է օնլայն՝ business.ameriabank.am հարթակի միջոցով:

ՓՄՁ ոլորտում «Ամերիաբանկ»-ի կողմից կատարված ներդրումները ամփոփվել են «Եռակի լավագույնը» արշավի շրջանակում, որտեղ փոքր եւ միջին գինեգործական ընկերությունների կարեւորության, կայուն բիզնես գործընկերության եւ «Ամերիաբանկ»-ի հետ համագործակցության մասին է պատմում «Վան Արդի» գինու գործարանի հիմնադիր Վարուժան Մուրադյանը:

«Ամերիաբանկ»-ը 2022 թ.-ին միջազգային առաջատար երեք ամսագրերի՝The Banker-ի, Euromoney-ի եւ Global Finance-ի կողմից ճանաչվել է տարվա «Լավագույն բանկը» Հայաստանում, ինչի առթիվ էլ մեկնարկել է «Եռակի լավագույնը» արշավը՝ «Լավագույն հնարավորությունը ստեղծում են մարդիկ» կարգախոսով: Արշավը նվիրված է վերջին տարիներին բանկի ձեռքբերումների հետեւում կանգնած բոլոր մարդկանց՝ հաճախորդներից ու գործընկերներից մինչեւ աշխատակիցներ:

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

«Ամերիա»-ն առաջինը Հայաստանում ստեղծել է էկոհամակարգեր ՓՄՁ-ների եւ անհատների համար՝ ապահովելով հասանելիություն բանկային եւ ոչ բանկային մի շարք ծառայությունների մեկ պատուհանի սկզբունքով՝ Estate.ameriabank.am, Automarket.ameriabank.am, Sme.ameriabank.am:

Լինելով հաճախորդամետ՝ «Ամերիա»-ն ձգտում է ժամանակակից թվային աշխարհում ապահովել սպասարկման բարձր որակ՝ վստահելի եւ անվտանգ միջավայրում առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՊԿՆ-Ն ՆՇՈՒՄ Է 60-ԱՄՅԱԿԸ

ArmLur.am-ը ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից տեղեկացավ, որ Հայաստանի պետական կամերային նվագախումբը նշում է հիմնադրման 60-ամյակը:

Այս կապակցությամբ «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի է ունեցել հոբելյանական գալա համերգ, որին ներկա են եղել կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը:

ԿԳՄՍ նախարարը շնորհավորել է երաժշտական կոլեկտիվին հոբելյանի կապակցությամբ եւ ընդգծել նվագախմբի նվիրյալների վաստակը կամերային երաժշտության տարածման, միջազգային հարթակներում հայ կատարողական արվեստը ներկայացնելու գործում:

«Ուրախալի է, որ այսօր էլ Հայաստանի պետական կամերային նվագախումբը հանդես է գալիս իբրեւ ամենաակտիվ երաժշտական կոլեկտիվներից մեկը: Բոլորովին վերջերս նվագախումբը նախարարության նախաձեռնությամբ եւ աջակցությամբ փայլուն ելույթներով հանդես է եկել Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթ երկրամասում: Արձագանքներն ավելի քան տպավորիչ են:

Վստահ եմ, որ նվագախումբը շարունակելու է մնալ կամերային երաժշտության տարածման առաջատարը եւ բարձր մասնագիտական ու գեղարվեստական չափանիշների պահապանը: Ի սրտե շնորհավորում եմ նվագախմբին, կամերային երաժշտության ազգային կենտրոնի ղեկավարությանը եւ երաժշտասեր հանրությանը հոբելյանի կապակցությամբ»,- ասվել է ուղերձում: Համերգի շրջանակում Հայաստանի պետական կամերային նվագախմբում ունեցած նշանակալի ավանդի, երկարամյա գործունեության, ինչպես նաեւ նվագախմբի հիմնադրման 60-ամյա հոբելյանի կապակցությամբ Հայաստանի պետական կամերային նվագախմբի կոնցերտմայստեր, ջութակահար Աստղիկ Բագրատի Վարդանյանը պարգեւատրվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մեդալով: Համերգի ընթացքում հնչել են հայ եւ համաշխարհային երաժիշտների ստեղծագործություններից, այդ թվում՝ Կոմիտասի, Է. Միրզոյանի, Է. Բաղդասարյանի, Մոցարտի, Բեթհովենի, Վիվալդիի:

Նվագախմբի հետ կատարումներով հանդես են եկել ՀՀ վաստակավոր արտիստներ Նիկոլայ Մադոյանը, Նարեկ Հախնազարյանը, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սվետլանա Նավասարդյանը, դիրիժորներ Ռոբերտ Մլքեյանը, Ջավեն Վարդանյանը, Հմայակ Դուրգարյանը: Նվագախմբին միացել են նաեւ «Հովեր» եւ Հայաստանի պետական կամերային երգչախմբերը:

Լ.Ե.

ԿԱԿԱՉՆԵՐ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԴԻՄԱՎՈՐԵԼ ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Գարնան առաջին օրը հրաժեշտ տվեցին ցրտաշունչ ձմռանը եւ բարի գալուստ մաղթեցին գարնան արեւաշատ օրերին: Իհարկե, ոմանց համար գարնան առաջին օրը առանձնահատուկ էր, իսկ ոմանց համար էլ սովորական, հերթական մի օր էր: ArmLur.am-ը ներկայացնում է այն հայ հայտնիներին, որոնք գարնան առաջին օրը դիմավորել են գեղեցիկ ծաղիկներով եւ մեծ սպասումներով:

«Միսս Հայաստան» մրցույթի հաղթող, հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանն օրն առանձնացրել է գարնանային ֆոտոշարքով:

Դերասանուհի Էմմա Սապուբջյանն օրվա առթիվ հումորային գրառում է արել. «Իմ դեմքը, երբ հասկացա, որ արդեն գարուն է»:

Դերասանուհի Աստղիկ Ալավերդյանը հրապարակել է կակաչների գեղեցիկ փնջով լուսանկար եւ իր սերն արտահայտել հետաքրքիր գրառմամբ. «Ինձ թվում է՝ եթե ես մարդ չծնվեի, ապա հաստատ ծաղիկ էի լինելու...»:

Երգչուհի Հռիփսիմե Հակոբյանն օրվա առթիվ հրապարակել է գեղեցիկ դեղին կակաչներով լուսանկար: «Գարուն». վերնագրել է նկարը:

ԼՈՒՐԵՐ

ԿԵՐԿԱՐԱՁԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Միլանի «Ինտերի» եւ Թուրքիայի հավաքականի 29-ամյա կիսապաշտպան Հական Չալհանօգլուն կերկարաձգի պայմանագիրն իտալական ակումբի հետ:

«Հպարտ եմ, որ մնալու եմ «Ինտերում»: Ցանկանում եմ հետագայում էլ խաղալ այստեղ: «Ինտերն» առանձնահատուկ ակումբ է»,- ասել է ֆուտբոլիստը:

Չալհանօգլուի գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս: Նա «Ինտեր» է տեղափոխվել 2021-ին գերմանական «Բայերից»: Չալհանօգլուն ծնվել է Գերմանիայում եւ հանդես է եկել նաեւ «Կառլսրուեում» եւ «Համբուրգում»:

Ընթացիկ մրցաշրջանում Չալհանօգլուն «Ինտերի» հետ մասնակցել է 32 հանդիպման, խփել է 3 գոլ, կատարել 6 գոլային փոխանցում: Transfermarkt-ը ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը գնահատում է 35 միլիոն եվրո:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՇՈՒՇԻՈՒՄ

Ադրբեջանի իշխանությունները շրջագայություններ են կազմակերպում օկուպացված հայկական Շուշի քաղաքում:

Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ շրջագայությունները լինելու են «մեծ վերադարձի քաղաքականության» մի մասը, ընդ որում՝ օկուպացված հայկական քաղաք կարող են այցելել 18 տարեկանից բարձր անձինք:

Առաջին տուրիստական ուղեւորությունները կիրականացվեն Նովրուզ տոնի նախաշեմին շաբաթական մեկ անգամ՝ սկսած մարտի 18-ից: Հաջորդ փուլում նախատեսվում է ավելացնել տուրերի քանակը:

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալն» ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ 220 միլիոն եվրո կառաջարկի Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ին Ֆրանսիայի հավաքականի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեի տրանսֆերի համար:

Անցած ամռանը Մբապեն կարող էր անվճար տեղափոխվել Արքայական ակումբ, սակայն նոր պայմանագիր կնքեց փարիզյան ակումբի հետ: Այն նախատեսված է մինչեւ 2024թ. հունիս եւս մեկ տարով երկարաձգման հնարավորությամբ:

Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն ՊՍԺ-ի հետ մասնակցել է 29 հանդիպման, խփել է 29 գոլ, կատարել 7 գոլային փոխանցում:

Transfermarkt-ը Մբապեի տրանսֆերային արժեքը գնահատում է 180 միլիոն եվրո:

● *Մարտի 6-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա «The Band» համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՔԱՂՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ կան արդյոք դեպքեր, երբ քաղաքացիական ծառայության խորհուրդն անցկացնում է ծառայողական քննություն: Եթե այո, ապա խնդրում եմ նշել մի քանի դեպք:

Արմեն Սահակյան (37 տարեկան, օպերատոր)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննություն անցկացվում է՝

ա) եթե քաղաքացիական ծառայողը ծառայողական քննություն անցկացնելու մասին համապատասխան գրավոր պահանջ է ներկայացրել խորհրդին,

բ) եթե քաղաքացիական ծառայողի նկատմամբ մեկ տարվա ընթացքում արդեն կիրառվել է «խիստ նկատողություն», «օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում», «քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճանի (բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի) իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժերից որեւէ մեկը, եւ քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը դիմել է քաղաքացիական ծառայողի նկատմամբ «խիստ նկատողություն», «օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում», «քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճանի (բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի) իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժերից որեւէ մեկը կիրառելու նպատակով խորհրդի համաձայնությունը ստանալու համար,

գ) եթե քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը դիմել է քաղաքացիական ծառայողի նկատմամբ «զբաղեցրած պաշտոնից ազատում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ» կարգապահական տույժը կիրառելու նպատակով խորհրդի համաձայնությունը ստանալու համար,

դ) եթե քաղաքացիական ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը դիմել է օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու հիմքով քաղաքացիական ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու նպատակով խորհրդի համաձայնությունը ստանալու համար:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այսպիսով, քաղաքացիական ծառայողը, բացի աշխատանքի ընդունվելու քննություններ հանձնելուց, պետք է խիստ պարտաճանաչ լինի նաեւ աշխատանքային գործունեության ընթացքում: Բացթողումներն, ինչպես տեսնում ենք, հեշտությամբ չեն ներվում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե ինչ հիմքով կարող է մերժվել օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու ընթացակարգը:

Դիանա Ստեփանյան (42 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ, որպես ընդհանուր կանոն, օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե՝

-նա արտաքսվել է ՀՀ տարածքից կամ նախկինում զրկվել է կացության կարգավիճակից (եւ եթե արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշումից անցել է 3 տարուց պակաս ժամկետ),

-նա դատապարտվել է ՀՀ-ում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար,

-գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա ցանկանում է վնաս պատճառել ՀՀ պետական անվտանգությանը, սահմանադրական կարգին, թուլացնել պաշտպանունակությունը, իրականացնել ահաբեկչական գործունեություն, մարդկանց առեւտուր (թրաֆիքինգ) եւ այլն,

- նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը,

-կացության կարգավիճակ ստանալու համար նա ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր:

ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ 2013թ. Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայցով դիմել է 320 անձ: Նրանցից 259-ը ճանաչվել է փախստական եւ ստացել ապաստան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Դիլիջանում

Բնություն բաց թողնված կովկասյան ազնվացեղ եղջերուները զբոսանքի են դուրս եկել Դիլիջան քաղաքի բակերից մեկում: Եղջերուների մասնակցությամբ տեսանյութը հայտնվել է համացանցում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: